

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 15-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ Հոդված 12. Դրոշմանիշային վճարների չափը

1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝

1) հարկային գործակալից կամ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են հետևյալ դրույքաչափերով.

Մինչև 100 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	1500 - 1000 դրամ
100 001-ից մինչև 200 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	3000 - 1000 դրամ
200 001-ից մինչև 500 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	5500 - 1000 դրամ
500 001-ից մինչև 1 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	8500 - 1000 դրամ
1 000 001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում	15000 դրամ

2) անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ինչպես նաև հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են հետևյալ դրույքաչափերով.

Մինչև 2 400 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	18 000 - 12000 դրամ
2 400 001-ից մինչև 6 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	24 000 - 120000 դրամ
6 000 001-ից մինչև 12 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	48 000 - 12000 դրամ
12 000 001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում	120 000 դրամ